

Am. 1891

Հ. Կ. (Բ) Կ. ՅԵՐ-ՔԱՂ-ԿՈՄԻ ԿՈՒԼՏ-ՊՐՈՊ-ՔԱԺԻՆ

Apr.
2-6961a

2-6961a

ՄԵԹՈԴԱԿԱՆ ՆԱԽԱԿ

ԿՈՒՍ-ԼՈՒՍ-ՑԱՆՑԻ
ՊՐՈՊԱԳԱՆԴԻՍՏՆԵՐԻ ՀԱՄԱՐ

ՀԱՅ. № 20778

374

Մ-43

374
V-43

52. 304

Mar 2010

ՄԵԹՈԴԱԿԱՆ ՆԱՄԱԿ

Կուս-ուսուցման վորակի՝ նրա այդ կենտրոնական և հիմնական ողակի՝ բարձրացման համար խոշորագույն նշանակութիւն ունի վոչ միայն կուս-լուս ցանցում դասավանդող պրոպագանդիստների տեսական-քաղաքական, այլ և նրանց մեթոդական պատրաստականութիւնը: Իսկ մինչ դեռ մեր պրոպագանդիստներից չատ-չատերը կաղում են թե մեկից և թե մյուսից, մանավանդ մեթոդական պատրաստականութիւնից: Նրանց խոշորագույն մասը չունի բավարար ու անհրաժեշտ չափի մեթոդական պատրաստականութիւն: Ահա այդ և պատճառը, վոր մի շարք դասատու պրոպագանդիստներ գործադրում են դասավանդման ամենաանթույլատրելի մեթոդներ:

Գործադրվող այդ ամենաանթույլատրելի ու աղճատված մեթոդների շարքին և պատկանում՝ յերկար, ձանձրալի ու բովանդակազուրկ լեկցիան, խեղաթյուրված ու չդադմակերպված դրույքը, վոր վոչ մի աշխուժութիւն, հետաքրքրութիւն ու ակտիվութիւն չի առաջացնում ունկնդիրների մեջ, և վորը վոչնչով չի տարբերվում ամենավատթար, միտինդաշին բնույթ կրող ճառից կամ փքուն լեկ-

Գեանդաւի տպարան
Գլուխ 4301
Տիրած, 500
Տպ. 976

284-87

26 JUN 2013

յիւսից: Բացի այդ, բաւական տարածված են նաև ունկնդիրների ինքնուրույն աշխատանքի կազմակերպման անկանոն ու անսխառեմ, անգամ միանգամայն անթույլատրելի ձևերը:

Այս որինակ մեթոդների կիրառմամբ է, վոր մեր կուս-լուս ցանցում տեղի յե ունենում մեթոդական խառնաշփոթութուն, մի հանդամանք, վորի հետևանքով մեծ կտրվածութուն տալանալով ունկնդիրների և դասատու պրոպագանդիստների միջև, սպասելի և անհրաժեշտ արդյունք չի ստացվում, դասավանդվող նյութը խճճվում է, խառնաշփոթվում ու դառնում է անմատչելի, անըմբռնելի, իսկ ըմբռնվածն էլ լինում է մակերեսային: Կուս-ուսուցման աշխատանքների հենց այս թերությունները՝ մեթոդական բացերը վերացնելու նկատառումն էլ ունի սույն մեթոդական նամակը:

1. ԿՈՒՍ-ՈՒՍՈՒՑՄԱՆ ՄԵԹՈԴԻԿԱՆ ՅԵՎ ՆՐԱ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Կուս-ուսուցման մեթոդիկայի հիմնական խնդիրն է, վորոչ մեթոդական պրիոմների միջոցով կուս-ուսուցման վողջ աշխատանքի մեջ առաջացնել կենդանություն և աշխուժություն, սրել սովորող ունկնդիրների հետաքրքրությունն ու ակտիվությունն, առաջադրված ծրագրի յուրացման միջոցով բարձրացնել նրանց քաղաքական-թեորետիկական պատրաստականությունը, դարձնելով նրանց սո-

ցիալիստական շինարարության պատրաստված, առաջավոր մարտիկներ: Այս առումով վերցրած կուս-ուսուցման մեթոդիկան իրենից ներկայացնում է դասատու-պրոպագանդիստների կողմից գործադրվող այն մեթոդական պրիոմների սեստեմը, վորոնց կիրառմամբ սովորող ունկնդիրները հանգամանորեն, ամենախորը կերպով յուրացանում են առաջադրված նյութն ու սովորում իրենց ստացած գիտելիքների գործադրումը սոցիալիստական շինարարության պրակտիկայում:

Իր իսկական կոչման վրա լինելու համար կուս-ուսուցման մեթոդը պիտի լինի վոչ թի ինքնանպատակ, այլ նա պետք է լինի միջոց և պոյմանավորվի կուս-ուսուցման բովանդակությունը կազմող բայլչելիկյան կուսակցության-մարտական խնդիրներով և բղխի մի շարք պոյմաններից՝ որինակ՝ դպրոցի կամ խմբակի տիպից, թեմայի բովանդակությունից, ունկնդիրների տեսական-քաղաքական պատրաստականության մակարդակից և այլն:

Կուս-ուսուցման մեթոդը վոչ միայն ինքնանպատակ է պիտի լինի, այլ նա չի կարող լինել նաև ունիվերսալ, չի կարող ունենալ համայնապարփակ բնույթ:

Իսկ այս նշանակում է, վոր չի կարող լինել կուս-ուսուցման մի այնպիսի ունիվերսալ մեթոդ, վորը կիրառելի լինի բոլոր պոյմաններում ու բոլոր աուդիտորիաների նկատմամբ:

Սակայն այս դեռ չի նշանակում, վոր յե-

թե բոլոր զեպքերում չի կարելի գործադրել միևնույն մեթոդը, ապա ամեն մի պրոպագանդիստ պետք է իր «ուզածին» պես դասավանդի, ընտրի և գործադրի ամեն մի պատահական մեթոդ, և վոր այդ միջոցով կուս-լուս ցանցում պիտի ստեղծվի մեթոդական խառնաշփոթություն վորպիսին գոյություն ունի մեզանում՝ մեր կուս-ցանցի վորոչ ողակներում:

Կուս-ուսուցման այս կամ այն մեթոդական պրիոմն ընտրելիս և գործադրելիս պիտի միշտ յելակետ ունենալ, վոր լավ է բայլչեիկյան պրոպագանդայի այն մեթոդը, կուս-ուսուցման այն մեթոդական պրիոմը, վոր սովյալ կոնկրետ պայմաններում և սովյալ կոնկրետ առդիտորիային հնարավորություններ է բն-ձեռնում, յուրացնելու, ձեռք բերելու քաղաքական տեսական այնպիսի պատրաստականություն, վորը անհրաժեշտ է և պահանջվում է բայլչեիկյան կուսակցության գլխավոր գծի անապարտ ու հստակ կենսագործման համար: Իսկ կուս-ուսուցման աշխատանքի այդպիսի մեթոդը, մեթոդական պրիոմներ ունենալն անհրաժեշտ է և հնարավոր, վորովհետև կուս-ուսուցման բայլչեիկյան դրույթներն ու բայլչեիկյան պրոպագանդայի յերկարամյա աշխատանքի փորձը մեզ հնարավորություն է տալիս ընտրելու և գործադրելու կուս-ուսուցման աշխատանքի այն մեթոդական պրիոմները, վոր-

բոնք՝ ամենահեշտ ու շյուրին ճանապարհով հասցնում, հանգցնում են ամենամեծ արդյունքի:

2. Զ Ր Ո Ւ Յ Ց

Բայլչեիկյան պրոպագանդայի յերկարամյա աշխատանքի փորձով ստուգված կուս-ուսուցման ամենահիմնական և մասնայական մեթոդը հանդիսանում է զրույցը: Սակայն բանն այն է, վոր կուս-ուսուցման այդ ամենահիմնական ու մասնայական մեթոդը՝ զրույցը՝ ամենից շատ է խճողվում, խառնաշփոթվում ու գոհակացման յենթարկվում:

Մեր կուս-լուս ցանցում աշխատող ամեն մի պրոպագանդիստ զրույցը հասկանում և մղումակերպում է իր «ուզեցածին պես», այնպես, ինչպես ինքն է ցանկանում: Զրույցի այդորինակ աղճատումից խուսափելու համար ամենից առաջ հարկավոր է զրույցը կազմակերպել ճիշտ ու ճկուն կերպով: Իսկ ճիշտ կազմակերպված զրույցը պիտի կարողանա կուս-լուս ցանցի զանազան միավորումներում կազմակերպել ակտիվ աշխատանք, ուկնդիրների մեջ ուժեղ նախաձեռնություն առաջացնելու միջոցով նրանց սովորացնել, յուրացնել տալ Մարքս-Լենինյան տեսությունը և դարձնել տեսականորեն, քաղաքականապես պատրաստված մարտիկներ հակահեղափոխական զանազան տրամադրությունների, գաղափարախոսու-

թյունների և կուսակցութեան գլխավոր գծի
ամեն մի խեղաթյուրման դեմ պայքարելու
գործում: Քառսից, խուճապից ու խառնաշփո-
թությունից խուսափելու համար զրույցի կազ-
մակերպման ու անցկացման ամբողջական ըն-
թացքը պիտի կատարվի վոչ թե մի ակնթար-
թով, հապճեպ կերպով, այլ այն պիտի կա-
տարվի վորոշ անցման մոմենտներով և այդ
անցման մոմենտների վորոշ հաջորդականու-
թյամբ ու հետեւողականությամբ:

Այս տեսանկյունով կազմակերպված
զրույցի ամենամասնական, սկզբնական մո-
մենտը պիտի լինի զրույցի նախապատրաս-
տումը: Զրույցի նախապատրաստման ընթաց-
քում նախ և առաջ պիտի նախապատրաստվի
ինքը դասատու պրոպագանդիստը: Նա նախա-
պես պիտի մշակի քաղ-պարագմունքի հերթա-
կան թեման, ձեւակերպի թեմայի նպատակը,
տեղն ու դերը առաջադրված ծրագրի մեջ,
ընտրի նրա հանգուցային հարցերը: Դրա հա-
մար դասատու պրոպագանդիստը պիտի խո-
րագնին կերպով ուսումնասիրի թեմայի, նրա
հանգուցային հարցերի վերաբերյալ յեղած
գրականությունը, հատկապես Մարքսի, Են-
գելսի, Լենինի, Ստալինի յերկերից համապա-
տասխան հոդվածները, կուսակցութեան և Խոր-
հրդային օրգանների համագումարների, կոն-
ֆերանսների վորոշումներն ու բանաձևերը,
լրագրերում, ժուրնալներում հրապարակված
հոդվածներն ու փաստաթղթերը: Զրույցի ժա-

մանակ սրբապմունքի թեման տեղայնացնելու
նպատակով զրույցը նախապատրաստելիս պի-
տի հատուկ և լուրջ ուշադրություն դարձնել
ավյալ թեմայի հետ կապվող տեղական մա-
տերիալների ու փաստերի ուսումնասիրութեան
վրա: Այս բոլորի հիման վրա պրոպագան-
դիստը նախապես պիտի մշակի, հղկի ու բա-
նաձևի թեմայի հանգուցային հարցերի բո-
լոր ֆորմուլիրովկաներն ու դրույթները՝
զրույցի ժամանակ այդ հարցերին ճիշտ, բո-
վանդակալից, հիմնավորված դիրքավորում-
ներ տալու համար: Բացի այդ նախապես պիտի
պատրաստել թե ամբողջ թեմայի և թե առան-
ձին ունկնդիրներին արվելիք փոքրիկ գեկու-
յումների ու դիադրամաների, հանձնարարու-
թյունների պլանն ու ընթերցանութեան համար
համապատասխան դրականութեան ցուցակը,
նշելով վոչ միայն ամբողջ թեմայի, այլ նաև
թեմայի ամեն մի հանգուցային հարցի մասին
ընթերցվելիք գրականությունը:

Պատաստու-պրոպագանդիստի նախապատ-
րաստվելուն պիտի հաջորդի ունկնդիրների նա-
խապատրաստումը: Զրույցի կազմակերպման
այս մոմենտով զանազան պրիոմների ու ձե-
վերի գործադրմամբ ունկնդիրները պիտի ծա-
նոթանան մշակվող թեմայի բովանդակու-
թյանը, պիտի նախապատրաստվեն և ստանան
ցուցմունքներ տանը յեւս նախապատրաստվե-
լու-զրույցի հաջորդ մոմենտի՝ բուն խսկ զրույ-
ցի համար:

կենդանի զրույցին փոխանցելու այս մո-
մենտը պիտի սկսել ներածական խոսքով: Յեթե
մշակվող թեման ունկնդիրներին անծանոթ և
ու դժվարին, այդ դեպքում ներածական խոս-
քում առանց ավելորդաբանությունների բա-
վական հանգամանորեն պիտի շարադրել, պար-
զաբանել ու դյուրըմբռնելի դարձնել թեմայի
հանգուցային հարցերը, իսկ յեթե թեման
ունկնդիրներին ծանոթ և ու դյուրըմբռնելի
այդ դեպքում ներածական խոսքը արվում է
չափ կարճ, հակիրճ, սեղմ, սակայն բովան-
դակալից:

Ներածական խոսքից հետո մշակվող թե-
մայի հանգուցային հարցերի շուրջը պիտի
կազմակերպել կենդանի զրույց, հարց ու պա-
տասխան, մութ, խրթին հարցերի պարզաբա-
նում և այլ: Այնուհետև պիտի անցնել թեմայի
հանգուցային հարցերի շուրջ ունկնդիրներին
փոքրիկ զեկուցումների, դիալեկտիկականների,
մշակվող թեմայի հետ կապակցվող տեղական
մատերիալների ու փաստերի կոնկրետ հանձնա-
լարությունների հանձնելուն: Իսկ ամենավեր-
ջում ունկնդիրներին պիտի գրանցել տալ մշակ-
վող թեմայի պլանը, նրա հանգուցային հար-
ցերն և մշակվելիք դրականության ցուցակը:

Զրույցի ամբողջական ընթացքի նշված
մոմենտներում թե դասատու պրոպագանդիս-
տի և թե սովորող ունկնդիրների լավ նախա-
պատրաստվելուց հետո միայն կարելի չե
անցնել՝ զրույցի հաջորդ մոմենտին, այսպես

ասած բուն իսկ գրույցին: Զրույցի այս մո-
մենտում թեմայի մշակված պլանի և նրա
մշակման համար սահմանված կարգի հիման
վրա պիտի անմիջապես անցնել բուն իսկ զրույ-
ցի ծավալմանը՝ ունկնդիրներին նախապես արը-
ված փոքրիկ զեկուցումների լսելուն, այդ զե-
կուցումների, թեմայի հանգուցային հարցերի
շուրջը հարց ու պատասխանների, վիճաբանու-
թյունների, մտքերի փոխանակությունների և
այլն կազմակերպմանը: Զրույցի ծավալման
ժամանակ պրոպագանդիստը պետք է ղեկավա-
րի զրույցը, այն կենտրոնացնելով թեմայի
հանգուցային հարցերի շուրջը՝ խուսափելով
անտեղի ավելորդաբանություններից:

Նա, բացի թեմայի հանգուցային հարցերից
պիտի առաջադրի նաև պարզաբանող՝ ոգնող,
ոժանդակող հարցեր: Հարցերի առաջարկման
ժամանակ ամեն մի ունկնդրի նկատմամբ պի-
տի ունենալ դիֆերենցիալ մոտեցում և առան-
ձին հարցերի առաջադրման միջոցով նրանց
պիտի կապել զրույցի ամբողջական ընթաց-
քին, չ' թույլատրելով նրանց մեկուսանալու,
զրույցից կտրվելու և նրա պատասխի մասնակիցը
դառնալու:

Զրույցի ժամանակ ըստ ամենայնի պետք է
առաջ քաշել ու մշակել նախապես նախապատ-
րաստված տեղական նյութերն ու փաստերը,
այն հարցերը, վերոնք կապված են տվյալ հիմ-
նարկ-ձեռնարկի կամ արտադրական պրակտիկ
գործունեյության հետ, փաստեր և հարցեր, վո-

բոնք պետք է պարզաբանվեն քաղաքական-տե-
սականորեն ու դրվեն տեսական-քաղաքական
պատշաճ բարձրութեան վրա:

Պարապմունքի ժամանակ լուրջ և հանգու-
մանորեն պիտի հետևել առանձին հարցերի
չուրջն առաջացած վիճարանություններին,
ունկնդիրների յեղույթներին, նրանց հարց ու
պատասխանին, ինչպես նաև սխալ, թյուր ու
թշամական տեսակետներին ու բմբռնումնե-
րին և ապա մինչև վերջին յեզրափակումը
տվյալ հարցերի մասին պիտի կատարել ամ-
փոփում, առլով նրա ճիշտ գիրքավորումն ու
բանաձևումը, վերհանելով յեղած սխալների
ու թշամական արտահայտությունների հակա-
լենինյան ելությունը: Զրույցի ժամանակ թե-
մայի հանգուցային հարցերի շուրջը կարելի չե-
կարդալ Մարքիս, Էնգելսի, Լենինի, Ստա-
լինի յերկերից հակիրճ, կարճ դարձվածքներ,
բանաձևումներ, հատվածներ, զանազան փո-
րոչումներից, դոկումենտներից փոքրիկ կարո-
ններ, կարելի չե ոգտագործել, ինչպես ունկրն-
դիրների կազմած դիագրամաները, այնպես
եւ այլ դիագրամաներն ու քարտեզներ և այլն:

Զրույցի վերջում պրոպագանդիստը պո-
տասխանելով ունկնդիրների առաջադրած հար-
ցերին, յեզրափակում է զրույցը, կատարում
վերջին ամփոփումը, ամբողջականացնելով
թեման, ընդհանուր հանրագումարի բերելով
զրույցը: Յեզրափակման խոսքից հետո, ուն-
կրնդիրների կողմից պիտի գրի անցկացվեն

հանված յեզրակացությունները, զրույցի ժա-
մանակ դրված և լուծված հիմնական, հանգու-
ցային հարցերի բովանդակությունը, նրանց
կարճ, հակիրճ ու բովանդակալից ֆորմուլի-
րովաներն ու դիրքավորումները:

3. ՈՒՆԿՆԴԻՐՆԵՐԻ ԻՆՔՆՈՒՐՈՒՅՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

Կուս-լուսավորության աշխատանքի կազ-
մակերպման ձևերի մեջ կարեւոր տեղ է
ընտելում նաև ունկնդիրների ինքնուրյուն աշխա-
տանքի կազմակերպումը: Մինչդեռ այդ
գործը ևս մեր կուս-լուս-ցանցում վերին
առաջնություն թույլ է դրված:

Ունկնդիրները թե տանը և թե դպրոցում
կամ խմբակում, պարապմունքի ժամանակ
կամ պարապմունքներից հետո կազմակերպ-
ված, սխտեմատիկ բնույթ կրող ինքնուրյուն
աշխատանք չեն կատարում և բավականանում
են միայն նրանով, ինչ վոր լուծ են:

Շատ պարզ է, վոր այսպիսի դեպքում
կուս-ուսուցման գործն ընթանալու չե միա-
կողմանի կերպով, կրելու չե մակերեսային
բնույթ և չի կարող չոչափելի արդյունքներ
տալ: Այդ պատճառով էլ շատ լուրջ ուշադ-
րություն պիտի դարձնել ունկնդիրների ինք-
նուրյուն աշխատանքի կազմակերպման վրա:

Իսկ վո՞րն է ունկնդիրների ինքնուրյուն
աշխատանքի կազմակերպման խնդիրը:

Նրա հիմնական խնդիրը հանդիսանում է՝
ինքնուրույն ընթերցանություն կազմակեր-
պելու, ամփոփումներ ու գրավոր աշխա-
տանքներ կատարելու, դիագնոստիկական և
կոնսպեկտներ, իսկ վորոշ դեպքերում նաև
թեզիսներ կազմելու միջոցով խորացնել ու
հիմնավորել ունկնդիրների ստացած տեսա-
կան-քաղաքական գիտելիքները:

Սակայն չպիտի կարծել, վոր ամեն դեպ-
քում և բոլոր պայմաններում կարելի չե կի-
րառել ինքնուրույն աշխատանքի կազմակերպ-
ման միեռնակ ձևը: Շատ պարզ է, վոր
ինքնուրույն աշխատանքի այդպիսի կազմա-
կերպումն, վոր թե դրական այլ բացասական
հետևանք կտա: Դրանից խուսափելու համար
ուկնդիրների ինքնուրույն աշխատանք կազ-
մակերպելիս, նույնպես պիտի չեղակետ
ունենալ՝ խմբակի կամ դպրոցի տիպը, մշակ-
վող թեման, ուկնդիրների կազմը, նրանց
տեսական պատրաստականությունը, դրողի-
տությունը և այլն:

Ունկնդիրների ինքնուրույն աշխատանքը
պիտի կազմակերպել վոր թե այնպես, վոր
այն տարվի միայն դպրոցում, կամ միայն
տանը, և վոր ել այնպես, վոր այն տարվի
դպրոցում և տանն անջատված, իրար հետ
չկապակցված կերպով, այլ այնպես, վոր
ինքնուրույն աշխատանք կազմակերպվի թե
դպրոցում և թե տանը՝ այն ել իրարու հետ
կապակցված, չափազանցված կերպով:

Ինքնուրույն աշխատանքն ամենից առաջ
պիտի կազմակերպել խմբակում, դպրոցում:

Դպրոցում կամ խմբակում կազմակերպ-
վող ինքնուրույն աշխատանքի մեջ կարելի
տեղ ե բռնելու՝ նախ ունկնդիրների մշակվող
թեմայի հանգուցային հարցերին վերաբերող
նախապես ընտրված գրականությունից փոք-
րիկ հոդվածների, կարճ, սեղմ ու բնորոշ
հատվածների ինքնուրույն ընթերցանությունը
պարզաբանումներն ու ամփոփումները:

Ընթերցանությունը ղեկավարում է պրո-
պագանդիստը և այն այնպես կազմակերպում
վորպեսզի ունկնդիրների մեջ հետաքրքու-
թյուն առաջանա, մշակվող թեման հե-
տաքրքրությամբ յուրացվի և վոր թե վերած-
վի ձանձրալի, քննցնող ընթերցանության,
ինչպես այդ հաճախ պատահում է: Բացի այդ
ուկնդիրների ինքնուրույն աշխատանքի մեջ
կարելի տեղ ե բռնելու նաև մշակվող թեմայի
աշխատանքի պլանի, նրա հանգուցային հար-
ցերի, այդ հանգուցային հարցերի վերաբեր-
վող բանաձևվումների, ամփոփումների ու
յեզրակացությունների գրի առնելը: Գրանց-
վող ամփոփումները, յեզրակացությունները,
բանաձևվումները և այլն պիտի լինեն կարճ,
սեղմ ու բովանդակալից և պետք է գրանցվեն
կամ պորտապանդիստի թեյադրությամբ,
յեթե ունկնդիրները ինքնուրույն կերպով չեն
կարող գրել, կամ թե ունկնդիրների կողմից,
յեթե այն նրանք կարող են անել: Սակայն

գրավոր աշխատանքի ժամանակ, սլոուպ-
զանդիստը պիտի ղեկավարի նրանց գրավոր
աշխատանքները, հսկի վորպեսզի ճիշտ գրեն,
գրելուց հետո յեւ ստուգի՝ սխալներն ուղղելու
համար:

Դպրոցում կամ խմբակում կազմակերպ-
ված ինքնուրույն աշխատանքին պիտի հաջոր-
դի ունկնդիրների տնային ինքնուրույն աշ-
խատանքը:

Ունկնդիրները տնային այդ ինքնուրույն
աշխատանքները նույնպէս պիտի կազմա-
կերպի սլոուպզանդիստը, նա պիտի կազմի
ունկնդիրների տնային ինքնուրույն աշխա-
տանքի պլանը, պիտի մշակի այն հարցերը,
վորի շուրջը ունկնդիրները տանը պիտի կար-
դան, մշակեն ու գրավոր աշխատանք կատա-
րեն, պիտի ընտրի այն գրականութիւնը,
վորը նրանք պիտի կարդան, մշակեն, ցույց
տալով ինչ կարգաւ, ինչպէս կարգաւ, յուրաց-
նել, ամփոփել ու գրել: Ունկնդիրների տնային
ինքնուրույն աշխատանքը, նայած պայման-
ներին, կարելի չէ կազմակերպել թէ անհատո-
րեն և թէ կոլլեկտիւ կերպով:

4 ԼԵԿՑԻԱՆ, ՆՐԱ ՏԵՂՆ ՈՒ ԴԵՐԸ ԿՈՒՍ- ԼՈՒՍ-ՑԱՆՑՈՒՄ

Ինչպէս ասվեց կուս-ուսուցման մեթոդը,
ի՞նչպէս փնթնանապատակ, այնպէս եւ ունիվեր-
սալ լինել չի կարող: Յե՛վ կուս-լուս ցանցում

գրույցի և ինքնուրույն աշխատանքի կողմա-
կերպման ձեւերի հետ միասին վորոչ ղեպ-
քերում և վորոչ պայմաններում կարելի չէ
կիրառել նաեւ լեկցիան: Իհարկե առանց նրա-
նով տարվելու և այն ունեւներսով մեթոդ
շարձնելու: Լեկցիայի հիմնական խնդիրն է՝
կազմակերպված, սիստեմատիկ կերպով ու
վորոչ հերթականութեամբ շարադրել և յու-
րացնել տալ առաջադրված նյութը կամ ծրա-
դրի հանգուցային թեմաների, հարցերի վորոչ
կոմպլեկտ, այնպէս վոր սիստեմատիկացիայի
յենթարկված կերպով ավելի բարձրանա ուն-
կնդիրների տեսական-քաղաքական պատ-
րաստականութիւնը:

Լեկցիան իրեն կարող է արդարացնել,
տալ շոյափելի արդյունք միայն և միայն այն
ղեպքում, յեթե այն լավ է նախապատրաստ-
վում: Լեկցիան նախապատրաստելիս այն
ամենից առաջ պիտի բղխեցնել և կապակցել
տվյալ խմբակի կամ դպրոցի ամբողջական
աշխատանքի հետ և բոտ այնմ եւ լեկցիայի
համար պիտի ընտրել հանգուցային հարցերի
կամ թեմաների այս կամ այն կոմպլեկտը:
Լեկցիան կարելի չէ կիրառել նոր թեմա անց-
կենալին այն ղեպքում, յերբ մշակվող թեման
բարդ է և ունկնդիրների համար անմանութ ու
գծվոր ըմբռնելի: Այսպիսի ղեպքում լեկ-
ցիայի միջոցով՝ սիստեմատիկ և հանգաման-
նորեն պիտի շարադրել մշակվող թեման
նորեն պիտի շարադրել մշակվող թեման

ստիւնելով անտեղի կրկնողաբանություններէց
ու ավելորդաբանություններէց:

Ուկնդիրներէ ստացած գիտելիքները սիւ-
տեմատիղացիայի յենթարկելու յեւ խորաց-
նելու նպատակով, լեկցիան կարելի չէ կիրառել
նաեւ նյութի մշակումից հետո:

Այս դեպքում լեկցիայի թեման նախապէս
պիտի մշակվի ու խորացվի մի կողմից զրույ-
ցի, մյուս կողմից ինքնուրույն աշխատանքի
կազմակերպման միջոցով և իր հետագա դար-
չացումը ստանա լեկցիայի մեջ, տվյալ դեպ-
քում լեկցիոն թեմայի հանգուցային հար-
ցերը պիտի սխտեմատիղացիայի և ամ-
բողջականացման յենթարկի: Լեկցիան նա-
խապատրաստելիս լուրջ ուշադրություն պիտի
դարձնել լեկտորի նախապատրաստութեան
վրա, վորովհետեւ լեկցիայի հաջողությունը մե-
ծապէս կախված է լեկտորի վորակից: Յեր-
բեմն վատ ու անշնորք նախապատրաստված
լեկտորի պատճառով լեկցիան վոչ միայն հա-
ջողություն չի ունենում, այլ հաճախ եւ ուկն-
դիրներէ զրույցի և ինքնուրույն աշխատան-
քի կազմակերպման միջոցով ձեռք բերած գի-
տելիքները խառնաշփոթութեան, խճողման են
յենթարկվում, իսկ լեկցիայի միջոցով տրվող
նոր թեման դառնում է միանգամայն անըմ-
բունելի, անհասկանալի: Լեկցիան չպիտի լինի
յերկար ու ձգված. նա չ'պիտի կրի ճառախոսա-
կան բնույթ, չ'պիտի լինի փքուն, բովանդա-
կազուրկ ճառ, վորովհետեւ այդ որինակ լեկ-

ցիան ուղղակի ձանձրացնում է, քնացնում է
ուկնդիրներին: Նա չ'պիտի լինի նաեւ միայն
չոր ու ցամաք դասախոսություն, այլ այն ա-
վելի հետաքրքրական ու արդյունավետ դարձ-
նելու համար նրա հետ զուգընթացաբար պիտի
ողտազործել քարտեզները, դիագրամմանները
յեւ այլն:

Կուս-լուս ցանցում գործադրվող մեթո-
դական պրիոմներն իրենց կոչման վրա դնելու և
ցանկացած արդյունքը ստանալու համար, ան-
հրաժեշտ են մի շարք պայմաններ: Այդ պայ-
մաններէց ամենաոռնիւ հանդիսանում է պա-
րարմունքի վայրը, լսարանը կամ սենյակը:
Մեր կուս-լուս ցանցի մի շարք միավորումնե-
րում պարարմունքները անց ենք կացնում հար-
մարություններէ բոլորովին ցուրկ սենյակում
կամ աշխատավայրում, վորի մեջ անընդ-
հատ անց ու դարձ է կատարվում, վորի դուռը
միայն բացվում ու խփվում է, վորտեղ չկան
պարապելու սեղաններ, նստարաններ, ուր
ուկնդիրներէ մի մասը կանգնած է մնում, մի
այլ մասը նստում հատակին, կամ թե խրո-
կվում պարապմունքի սենյակի մի անկյու-
նում և վոչինչ չկարողանալով անել՝ ձանձրա-
նում են ու քնում:

Բացի այդ, կուս-լուս ցանցի մի շարք միա-
վորներում անմխիթարական է նաեւ դրակա-
նութեան յեւ գրեհական պիտույքներէ, տետ-
րերի, մատիտների և այլն հայթայթման
դործը. դպրոցներէց, խմբակներէց շատ-շա-

տերը չունեն համապատասխան գրականություն և գրենական պիտույքներ:

Մեր կուս-լուս ցանցում գրեթե չեն ոգտագործվում կինոն, թատրոնը, մուզեյը, քարտեզները, դիագրամաները, գեղարվեստական գրականությունը յեվ այլն: Իսկ մինչ դեռ սրանց ոգտագործումը շատ մեծ նշանակություն ունի կուս-լուս ցանցում գործադրվող մեթոդական պրիոմները համեմելու, ավելի ճկուն ու ունակ դարձնելու յեվ այդ միջոցով կուս-ուսուցման վորակը բարձրացնելու համար: Շատ պարզ է, վոր այդպիսի պայմաններում կուս-լուս-ցանցում, ինչպիսի մեթոդական պրիոմներ էլ, վոր գործադրվի, չօգտիւնի արդյունք տալ չի կարող: Ահա թե ինչու կուս-ուսուցման վորակը բարձրացնելու համար հարկավոր է գործադրել միջ միայն ճիշդ, ունակ մեթոդական պրիոմներ, այլ անհրաժեշտ է քաղ. պարապմունքի համար ունենալ կանավոր սենյակ, գրականություն, գրենական պիտույքներ, հարկավոր է լայն կերպով ոգտագործել կինոն, թատրոնը, մուզեյը, դիագրամաները, քարտեզները, գեղարվեստական գրականությունը և այլն, հանգամանքներ, վորոնք խոչորագույն նշանակություն ունեն կուս-ուսուցման վորակի բարձրացման յեվ վորոնց վրա մատների արանքով են նայում ինչպես շատ ու շատ պրոպագանդիստներ, այնպես էլ կուս-ուսուցման գործով զբաղվող վորոշ կազմակերպություններ:

